ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ
ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

«14» Մայիս 2021թ. №

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի նախագահ
Արարատ Միրզոյանին

Հարգարժա՛ն պարոն Միրզոյան,

Առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության 88-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 99-րդ հոդվածի 1-ին կետով՝ Ձեզ ենք ներկայացնում «Ադրբեջանի Հանրապետության կողմից Արցախի Հանրապետության բռնազավթված տարածքների դեօկուպացիայի եվ Արցախյան հիմնախնդրի կարգավորման վերաբերյալ» Ազգային ժողովի հայտարարության նախագիծը:

Նախագծի հիմնական զեկուցողը ՀՀ ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանն է:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակարգի 71-րդ կետի համաձայն՝ սույն գրությանը կցվում են.

1. նախագիծը,
2. նախագծի ընդունման հիմնավորումը:

Խնդրում ենք ԱԺ հայտարարության նախագիծը սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

Շնորհակալություն համագործակցության համար:

ՀՀ ԱԺ պատգամավորներ

Թագուհի Թովմասյան

Աննա Գրիգորյան

Սոֆիա Հովսեփյան